ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ռ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Մ. Հ. ՏՈՆՈՅԱՆ

Ժողովրդական սպառման առարկաների (ԺՍԱ) արտադրության ընդլայնումը և դրանց որակի բարձրացումը հանրապետության սոցիալական կարևորագույն պրոբլեմներից է, որը պահանջում է անհետաձգելի լուծում՝ ամենակարճ ժամկետներում։ Անցած տարիների ընթացքում հանրապետությունում տեղի է ունեցել ԺՍԱ արտադրության զգալի աճ։ Այսպես, 1989 թ. ԺՍԱ արտադրության առաջադրանքները կատարել են հանրապետության հետևյալ արդյունաբերական համալիրները. էներգետիկ համալիրը թողարկել է 1,75 մլն ռ. գումարի ապրանք, որը 1,6 %-ով գերազանցում է պլանային առաջադրանքը, մետաղագործականը՝ համապատասխանաբար 282,6 մլն ռ. և 1,7 %-ով, մեքենաշինականը՝ 359,5 մլն. ռ. և 0,8 %-ով, ագրոարդյունաբերականը՝ 983,6 մլն ռ. և 2,7 %-ով, սոցիալականը՝ 2,066 մլն ռ. և 1,6 %-ով[1]։

1988 թ. սկսած ժողովրդական սպառման ապրանքների արտադրության զարգացման և բնակչության պահանջարկի բավարարման մեջ նկատելի ավանդ է դնում հանրապետության տնտեսության կոոպերատիվ սեկտորը։ 1988—1989 թթ. գործող կոոպերատիվների քանակն աճել է 3,3 անգամ։ Ընդ որում, կոոպերատիվ սեկտորում աշխատողների ավելի քան 50 %-ը (89,2 հազար մարդ) ներգրավված են ԺՍԱ արտադրող կոոպերատիվներում։ 1989 թ. կոոպ-սեկտորի թողարկած ապրանքների և մատուցած ծառայությունների արժեքը կազմել է 1235 մլն. ռ., որը 4,8 անգամ գերազանցում է 1988 թ. արդյունքները։ Ընդ որում, ԺՍԱ արժեքը կազմում է 657,2 մլն ռ.՝ 4,4 անգամ ավելի, քան 1988 թ.։

Չնայած կոոպերատիվների քանակը սրընթաց աճում է, 15984 գրանցված կոոպերատիվներից 4924-ը (մոտ 32 %) տարբեր պատճառներով առայժմ չի գործում։

Ներկայումս ԺՍԱ արտադրության զարգացման պլանաչափ կառավարումը կատարվում է գերատեսչությունների շահերի դիրքերից, իսկ ռեգիոնալ պահանջարկը որոշվում է որպես համապատասխան ճյուղային պլանների գումար։ Քանի որ գերատեսչական պլանավորման հիմքում դրված է ճյուղի տնտեսական արդյունավետության չափանիշը, ապա այդ ձևով որոշվող զարգացման չափերն ի նկատի չեն առնում այնպիսի չափանիշ, ինչպիսին է ԺՍԱ-ով ռեգիոնալ պահանջարկի բավարարվածության մակարդակը։

Նախարարությունների կողմից պլանային արտադրատեսակների ոչ բավարար կոորդինացման պատճառով հաճախ տեղի է ունենում ապրանքների արտադրության զուգահեռություն, հիմնական և ուղեկցող ապրանքների արտադրությունների ծավալների միջև ապրանքի անհամապատասխանություն, որը բացասաբար է ազդում պահանջարկ-առաջարկ հարաբերակցության, ԺՍԱ-ի իրացման պայմանների վրա։

Այդպիսի պայմաններում հանրապետության բնակչության կենցաղային և տնտեսական ապրանքների պահանջարկը բավարարելու ուղղությամբ մեծ աշխատանք պետք է կատարեն հանրապետության ձեռնարկությունները, որի մասին են վկայում աղյուսակի տվյալները[2]։

---

[1] *Այս և հետագա տվյալները վերցված են ՀՀ վիճակագրությունից։*

[2] *Աղյուսակում բերված տվյալները վերցված են համապատասխան ձեռնարկություններից։*

Հանրապետությունում կահույք, ներկեր, լաքեր, մարզական ապրանքներ, ձայնագրիչներ, լամպեր և այլ ապրանքներ արտադրող ձեռնարկությունների առկայության պայմաններում նշված ապրանքների պահանջարկը բավարարվում է կիսով չափ, իսկ երբեմն՝ ավելի քիչ։ Օրինակ, «Լույս» արտադրական միավորումը տարեկան թողարկում է 2 մլն. ավտոլամպ, բայց հանրապետության ֆոնդ է առաքում 60 հազար հատ՝ բավարարելով պահանջարկի միայն 30 %-ը։

Աղյուսակ № 1

Տեղական արտադրության անբավարար մատակարարվող ապրանքների անվանացանկը

Անվանում	Չափման միավորը	Արտադրության ծավալը	Հանրապետ. Բ. ֆոնդը	Պահանջարկի բավարարվածության %-ը	Արտադրող
Ձայնագրիչներ «Մարս»	հ. հատ	10	10	60	«Հրազդան» գ-ն
Ավտոլամպեր	»	2000	60	30	«Լույս» ալմ
Կահույքի հավաքածու «Տաքեն»	»	100	100	20	Ա. Մյասնիկյանի ան. կահ. ալմ
Հավաքածու «Ենեժնոստ»	»	4000	400	50	Կահույքի ֆար. «Արարկիր»
Հավաքածու «Զիտա»	»	1800	1:00	50	
Բազկաթոռ-մահճակալ	»	4000	4 00	50	Կահույքի ֆաբրիկա № 1
Իազմոց-մահճակալ	»	9650	9650	50	

Ջրաներկերի, գունավոր մատիտների, մանկական ոտնասեղմիչավոր (պեդալային) ավտոմեքենաների, ռետինե գնդակների, նիտրոէմալի և այլ ներմուծվող կուլտուր-կենցաղային ու տնտեսական ապրանքների պահանջարկի բավարարումը կազմում է 20—80 %։ Միաժամանակ, հանրապետությունում կան ձեռնարկություններ, որտեղ հնարավոր է կազմակերպել վերոհիշյալ ապրանքների թողարկումը։ Այս ուղղությամբ մեծ աշխատանք պետք է կատարեն միութենական ենթակայության ձեռնարկությունները, հատկապես ԺՄԱ համալիրի տարբեր ենթաճյուղերի ձեռնարկությունները, որոնք լրիվ կամ մասնակի ենթակա են կոնվերսիայի։ Այս ձեռնարկությունների տեխնիկական բարձր հագեցվածությունը և փորձառու մասնագետների առկայությունը հնարավորություն կտան գրանցում կազմակերպելու ձայնագրիչների, հեռուստացույցների, տեսաձայնագրիչների, անձնական կոմպյուտերների և այլ բարձր պահանջարկ ունեցող ապրանքների արտադրությունը։ Հայաստանում ԺՄԱ արտադրության ոլորտում առաջատար դիրք է գրավում թեթև արդյունաբերությունը, որն արդյունաբերության «Բ» խմբի կառուցվածքում թողարկում է հանրապետության արտադրանքի համարյա կեսը (47,9 %)։ Զարդացման տեմպերի կայուն աճի շնորհիվ 1980—1988 թթ. թեթև արդյունաբերության արտադրանքի արժեքը «Բ» խմբի կառուցվածքում ավելացել է 3,9 %-ով։ Ճյուղի զարգացումը 1991 թ. առաջին հերթին կախված վրինի հումքային ապահովվածությունից։

Նման պայմաններում գլխավոր հարցերից է Հայաստանի թեթև արդյունաբերության բազայի լիովին կատարելագործումը։ Դրա համար անհրաժեշտ է. ա) հանրապետության արդյունաբերության և գյուղատնտեսության ձևավորված ճյուղային կառուցվածքը վերանայել հօգուտ այն արտադրությունների

ների, որոնք հումքով ապահովում են ԺՍԱ թողարկող թեթև արդյունաբերությանը և ուրիշ ճյուղերին։ Այս ճյուղերի նմուշակազմը (հումք և նյութեր) պետք է գոյանա ըստ դրանց արտադրանքը վերամշակող ԺՍԱ համալիրի ձեռնարկությունների պահանջարկների։ Առանց ԺՍԱ համալիրի ձեռնարկությունների պահանջները լրիվ բավարարելու, այս ճյուղերը չպետք է իրենց արտադրանքն արտահանեն ուրիշ հանրապետություններ։ բ) Զգալիորեն ավելացնել ինվեստիցիաներն այն ճյուղերում, որոնք հանրապետական ԺՍԱ համալիրի համար արտադրում են հումք և նյութեր։ Ոստումնասիրել այս ոլորտում համատեղ ձեռնարկությունների ստեղծման հնարավորությունները, ԺՍԱ ինվեստավորման մեջ գերազանցությունը տալ անթափոն և սակավաթափոն տեխնոլոգիաներ ներդնող ձեռնարկություններին, ինչպես նաև այն ձեռնարկություններին, որոնց թափոններն առավելագույնս կօգտագործվեն հանրապետության ԺՍԱ-ներ արտադրող թեթև և այլ ճյուղերի արդյունաբերական ձեռնարկություններում։ գ) Հանրապետության թեթև արդյունաբերության ճյուղային կառուցվածքը վերանայել հօգուտ այն ճյուղերի, որոնց պահանջը հնարավոր է բավարարել սեփական առաջնային և երկրորդային հումքով՝ նախապատվությունը տալով թափոնները վերամշակող ձեռնարկություններին։

ԺՍԱ աճող պահանջարկի բավարարման կարևորագույն պայմաններից է որակի բարելավումը և նմուշակազմի ընդլայնումը։ Որակի հարցը հատկապես արդիական է մեր հանրապետության համար, որի արդյունաբերությունը հիմնականում աշխատում է ներմուծվող հումքի և նյութերի հիման վրա։ Դրա հետ կապված՝ չափազանց կարևոր է ռեսուրսների արդյունավետ օգտագործումը՝ լավագույն վերջնական արդյունքներ ձեռք բերելու համար։ Ցածրորակ լինելու պատճառով արտադրված ԺՍԱ զգալի մասը չի վաճառվում, հանգեցնելով միջոցների կորուստների։ Այժմ, առավել քան երբեք, հնարավոր չէ տպառողներին բավարարել նախկին որակն ունեցող ապրանքներով։ Երկրաշարժի և բռնագաղթվածների ներհոսքի պատճառով իրադրությունը տպառողական շուկայում նկատելի փոխվել է։ Տպառողների մի մասը, չունենալով առաջին անհրաժեշտության ապրանքներ, գնում է այն, ինչ առաջարկվում է, բայց դա չի նշանակում, որ իրացված արտադրանքը համապատասխանում է նրանց պահանջներին։ Այս երևույթը ժամանակավոր է և չի բնորոշում հանրապետության աղգաբնակչության պահանջմունքների իրական մակարդակը։

ԺՍԱ որակի ձևավորված իրավիճակը բացատրվում է բոլոր մակարդակներում որակի կառավարման հստակ համակարգի բացակայությամբ։ ԺՍԱ արտադրության ժամանակ հիմնական ուշադրությունը ներկայումս կենտրոնացվում է որակի վերահսկմանը և ոչ թե ղեկավարմանը։ Բայց չէ՞ որ վերահսկումը, նույնիսկ ամենախիստը և օբյեկտիվը, ինքնին որակ չի ստեղծում, որովհետև վերահսկող մարմինների խնդիրը փոտանի հայտնաբերումն է և տուգանումը։ Միայն վարչական միջոցներով որակի հարցը չի լուծվի։ Անհրաժեշտ է կիրառել արտադրողի վրա ավելի ճկուն, ներգործող տնտեսական մեթոդներ՝ շահագրգռելով թողարկելու բարձրորակ արտադրանք։ Մեր կարծիքով ԺՍԱ աճող դեֆիցիտի և ցածր որակի պատճառը գործող տնտեսական մեխանիզմի անկատարությունն է։ Դրա գլխավոր թերություններից մեկը համախառն արտադրանքի ցուցանիշի նկատմամբ պլանավորման շարունակվող կողմնորոշումն է։ Անհրաժեշտ է վերանայել ԺՍԱ պլանավորման ամբողջ համակարգը՝ լրիվ բացառելով արժեքային ցուցանիշներով դրա կողմնորոշումը։

Մանրածախ գներով ԺՍԱ արտադրության պլանավորման մասին որոշումը չնայած թելադրված էր ապրանքային և գնողունակ ֆոնդերի կապակցման անհրաժեշտությամբ, իրականում հանգեցրեց դեֆիցիտի ուժեղացմանը, գների չկարգավորվող աճին, էժանագին նմուշակազմի դուրս մղվելուն։

Արտադրության որակի բարձրացմանը հատուկ ուշադրություն պետք է դարձվի արտադրական միավորումների ստորաբաժանումների մակարդակով։

Արտադրության որակի կոնկրետ ցուցանիշները պետք է սահմանեն հենց արտադրամասերը, որովհետև դրանք պայմանավորված են արտադրության այս կամ այն առանձնահատկություններով։ Արտադրական ստորաբաժանումների գործունեության որակով պետք է պայմանավորվի աշխատողների դրամական պարգևի և աշխատավարձի չափը։ Ընդ որում, դրամական պարգևը պետք է լինի ոչ թե աշխատավարձի հավելում, այլ արդյունավետ աշխատանքի խրախուսման միջոց։ Չնայած տարբեր արտադրություններն ունեն որոշ առանձնահատկություններ, որակի ընդհանուր ցուցանիշն արտադրական միավորումների ստորաբաժանումների շրջանակներում պետք է դառնա պիտանի արտադրանքի թողարկման քանակը և տեխնիկական կորուստների (խոտանի, թափոնի) ծավալի նվազումը։

Դեֆիցիտային (այդ թվում՝ էժան) և որակյալ ապրանքների արտադրության ընդլայնման նպատակով անհրաժեշտ է վարել ավելի ճկուն վարկային ու հարկային քաղաքականություն (ԺՍԱ արտադրությանը վարկ հատկացնել արտոնյալ պայմաններով, իջեցնել հարկերի դրույքները և այլն)։ ԺՍԱ որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է սահմանել արտադրող ձեռնարկության եկամուտների բաշխման կախվածությունը (առաջին հերթին նրա արտադրական անձնակազմի աշխատավարձի բարձրացման համար) ձեռնարկության աշխատանքի վերջնական արդյունքներից։ Ընդ որում, ԺՍԱ արտադրողի աշխատանքի վերջնական արդյունքը պետք է որոշի գնորդը՝ խանութում, այսինքն արտադրական միավորումների արտադրական ստորաբաժանումների եկամուտը պետք է կախում ունենա ոչ թե պլանի կամ նույնիսկ պայմանագրի կատարումից, այլ մանրածախ առևտրի ցանցում արտադրանքի իրացումից։ ԺՍԱ պատրաստողի նյութական պատասխանատվությունը բարձր պահանջարկ ունեցող ապրանքի զանգվածային արտադրության գլխավոր պայմանն է։ Տնտեսական բնույթի միջոցներ պետք է կիրառել նաև առևտրում, մասնավորապես պայմանագրային գների անհամաչափ բարձրացման համար սահմանել շոշափելի տուգանքներ։ Տուգանքի մի մասն անհրաժեշտ է տալ արտադրողին, նրան շահագրգռելով բացահայտելու առևտրի կողմից պայմանագրային գների անօրինական բարձրացման գործոնները։ Միայն արդյունավետ տնտեսական միջոցների լայն կիրառման շնորհիվ կհաջողվի վերացնել ԺՍԱ պակասը և սանձել դրանց գների սրընթաց աճը։

Ժողովրդական տնտեսության բնագավառում տեղի ունեցող գործընթացների վերլուծությունը, մանավանդ արմատական տնտեսական ռեֆորմի կապակցությամբ, համոզում է, որ նախարարությունների գործունեության հիմքում դրված ճյուղային սկզբունքը, նույնիսկ ֆունկցիաների շոշափելի ընդարձակման դեպքում, չի նպաստում դրանց աշխատանքների արդյունավետության բարձրացմանը՝ ԺՍԱ կազմակերպման և կառավարման, ինչպես նաև ուղեկցող ծառայությունների գծով։ Միևնույն ժամանակ, նախարարությունների ճյուղային ուղղահայաց ինտեգրացումը չի թույլատրում հասնել ԺՍԱ սպասարկող զանազան միութենական և հանրապետական նախարարությունների, գերատեսչությունների գործունեության լավագույն միջճյուղային կոորդինացմանը հանրապետության տարածքում։

Հանրապետության ԺՍԱ համալիրն անհրաժեշտ է դիտել ոչ միայն որպես կառավարման օբյեկտ, այլև որպես իրավահավասար սուբյեկտ։ Ընդ որում, համալիրի կառավարման ծանրության կենտրոնն անհրաժեշտ է փոխադրել տնտեսական ինքնավարության, շուկայական հարաբերությունների և համալիրի մեջ ձեռնարկությունների ու կազմակերպությունների կամավոր միավորման հիմքի վրա։ Այս ուղղությամբ մեր հանրապետության համար դրական քայլ է արդյունաբերության նախարարության ստեղծումը, որի մեջ պետք է մտնեն հանրապետության բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները, անկախ միութենական կամ հանրապետական ենթակայությունից։ Սա նաև թույլ կտա կառուցվածքային մեկ օղակի մեջ համախմբել ԺՍԱ արտադրության կառավարման և կազմակերպման բոլոր աշխատանքները՝ հան-

բապետության մասշտաբով։ Այս հարցի արդիականության և ժողովրդատնտեսական մեծ նշանակության մասին է վկայում այն փաստը, որ հանրապետության տարածքում գտնվող 438 արդյունաբերական ձեռնարկություններից 402-ը արտադրում են ժողովրդական սպառման ապրանքներ։ Ընդ որում, ԺՍԱ կետից ավելին թողարկում է հանրապետության թեթև արդյունաբերությունը։ Այդ արդյունաբերության արտադրանքը թողարկվում է հանրապետության 12 նախարարությունների և կազմակերպությունների ձեռնարկություններում։ Դրանցից 87,8 %-ն արտադրվում է հանրապետության թեթև արդյունաբերության, 6,9 %-ը՝ տեղական արդյունաբերության հանրապետական միավորման ձեռնարկություններում, 2,2 %-ը՝ ծառայությունների հանրապետական միավորումում։

Ներկայումս հանրապետության թեթև արդյունաբերությունը ներկայացված է 11 ճյուղերով, որոնցում գործում են մոտ 150 ինքնուրույն արտադրական միավորումներ և ձեռնարկություններ։ Առավել խոշորներն են կարի, տրիկոտաժի, կոշկեղենի ճյուղերը, որոնց համապատասխանաբար բաժին է ընկնում թեթև արդյունաբերության ապրանքային արտադրության 38,5, 20 և 12,7 %-ը։

Հանրապետության կարի ենթաճյուղը ներկայացնում են 82 ինքնուրույն ձեռնարկություններ, որոնք հիմնականում թողարկում են տվյալ ենթաճյուղի անվանացանկի մեջ մտնող արտադրանքի բոլոր տեսակները։

Կտորեղենի պահանջարկի համեմատությամբ պատրաստի արտադրանքին ներկայացվող բարձր պահանջարկի նկատելի միտումն այս ենթաճյուղին ներկայացնում է բարձր պահանջներ՝ արագորեն արձագանքելու նորաձևության փոփոխություններին և կայուն պահպանելու բարձր որակը, որին միշտ չէ, որ հաջողվում է հասնել, այն պատճառով, որ թողարկվող արտադրանքի լայն անվանացանկն ամբողջությամբ կախված է դրսից բերվող նյութերից, դրանց անվանացանկից ու որակից։ Հարկ է նշել նաև հանրապետության կարի ենթաճյուղի ձեռնարկությունների տեխնիկական և տեխնոլոգիական հագեցվածության հետ մնալը միջազգային մակարդակից։ Կարի ենթաճյուղի ձեռնարկությունների արդյունավետ աշխատանքի կարևոր պայման է նորաձևության տների առկայությունը՝ ըստ արտադրանքի հիմնական անվանացանկային տեսակների և սպառողների հետ անմիջական կապերի հաստատումը, որը հնարավոր է իրականացնել ֆիրմային խանութների և թողարկվող արտադրանքի տեսականու գովազդի միջոցով։ Սակայն, միշտ չէ, որ առանձին ձեռնարկությունը կարող է նշված խնդիրներն իրականացնել։ Ուստի, ելնելով վերոհիշյալից, մեր կարծիքով հանրապետության կարի ենթաճյուղում նպատակահարմար է կազմակերպել կոնցեռն, որը հնարավորություն կտա կամավոր հիմունքներով կենտրոնացնել համալիրի ձեռնարկությունների կարի արտադրանքի մոդելացման և գովազդի գիտատեխնիկական և արտադրական զարգացման, ինվեստիցիոն, ֆինանսական, արտաքին տնտեսական գործունեության, առևտրի, ձեռնարկությունների տնտեսաշվարկային տպասարկման ֆունկցիաները և այլն։ Միաժամանակ, նպատակահարմար է կարի կոնցեռնի կազմի մեջ մտցնել նաև Կիրովականի մորթու ֆաբրիկան, քանի որ նրա արտադրանքը լայնորեն օգտագործվում է մասնաճյուղում վերնազգեստ կտրելու համար։ Բամբակեղենի, բրդի, մետաքսի, տրիկոտաժեղենի ենթաճյուղերի, ինչպես նաև չգործած կտավների արտադրության բազայի (որոնք հիմնականում օգտագործում են դրսից բերվող հումք) և Կիրովականի քիմիական մանրաթելի գործարանի հիման վրա (որը կարող է ամբողջությամբ բավարարել հանրապետության թվարկված մասնաճյուղերի պահանջարկը քիմիական մանրաթելի և ացետատային թելերի նկատմամբ) հարկ է ստեղծել միջմասնաճյուղային միավորում (ՄՄ) «Հայտեքստիլ»։ ՄՄ գլխավոր նպատակը պետք է լինի իր կազմի մեջ մտնող ձեռնարկությունների գործունեության կազմակերպումը և կոորդինացումը կարի ու մյուս ենթաճյուղերի պահանջարկների բավարարման ուղղությամբ, ինչպես նաև ապահովելու հանրապե-

տության ընակչության պահանջարկը բարձրորակ նյութերով (կտորեղենով և տրիկոտաժե արտադրանքով)։ ՄՄ ստեղծումը հնարավորություն կտա կենտրոնացնել գիտատեխնիկական պոտենցիալը և ֆինանսական միջոցները, օպտիմալ ժամկետներում ստեղծել արտադրանքի (կտորեղենի) ակտրունքորեն նոր տեսակներ ու տեխնոլոգիաներ և դրանք արմատավորել արտադրության մեջ, զարգացնել կոոպերացման և կոմբինացման արդյունավետ ձևերը, համախմբել ուժերը՝ հումքի ձեռքբերման և պատրաստի հագուստը ներքին և արտաքին շուկաներում իրացնելու համար։ ՄՄ-ի ֆինանսական և նյութատեխնիկական զգալի հնարավորությունները թույլ կտան հումք արտադրող միութենական հանրապետությունների և արտասահմանյան գործընկերների հետ միասին ստեղծել հումքի վերամշակման, պատրաստի հագուստի արտադրության և փոխմատակարարման համատեղ ձեռնարկություններ։

Թեթև արդյունաբերության առաջատար ճյուղերից է կոշկեղենի արտադրությունը, որտեղ գործում են 17 ինքնուրույն ձեռնարկություն՝ իրենց մասնաճյուղերով։ Դրանցից 15-ը գտնվում են թեթև արդյունաբերության կազմում, իսկ 2-ը ենթարկվում են ծառայությունների հանրապետական միավորմանը։

Հանրապետության կոշկեղենի քրոմակաշվե ապրանքների պահանջարկի մոտ կեսը բավարարում է Երևանի կաշվի գործարանը։

Ենթաճյուղի հաջող աշխատանքը հիմնականում կանխորոշվում է թողարկվող արտադրանքի որակով և տեսականիով, դրա արագ նորացմամբ։ Այդտեղ նշանակալից դեր է կատարում կոշիկի մոդելների տունը, որը գործում է Երևանի «Մասիս» միավորումում։

Կոշկեղենի որակի և մրցակցային ընդունակության բարձրացման համար նպատակահարմար է հանրապետության կոշկեղենի ձեռնարկությունները և Երևանի կաշվի գործարանը միավորել որպես տնտեսական ասոցիացիա։ Այն պայմանագրային կարգով կմիավորի ձեռնարկությունները, ուղղություն կտա դրանց արտադրա-տնտեսական գործունեությանը, կխորացնի մասնագիտացումը և կոոպերացիայի զարգացումը։

Ներկայումս ուժեղանում է նաև կուլտուր-կենցաղային և տնտեսական նշանակություն ունեցող ապրանքների արտադրության կազմակերպական և կառավարման ձևերի միասնության անհրաժեշտությունը։ Կառավարման կազմակերպական կառուցվածքի տեսակետից, ԺՍԱ արտադրությունը և դրանց սպասարկումը շահագործման ընթացքում պետք է միասնական համակարգ լինեն։ Կուլտուր-կենցաղային և տնտեսական նշանակության ապրանքներ (մանավանդ կենցաղային բարդ տեխնիկա) արտադրող ձեռնարկությունների կատարելագործման առավել հեռանկարային ուղղությունն արդյունաբերական-առևտրասպասարկող միավորումների (ԱԱՍՄ) ստեղծումն է, որը պետք է ինտեգրացնի այդ ապրանքների արտադրության իրացման և շահագործման գործառնությունները։

Ժողովրդական սպառման տեխնիկապես բարդ ապրանքներ արտադրող ենթաճյուղերում (հեռուստացույցներ, տեսամագնիտոֆոններ, կոմպյուտերներ և այլն) ԱԱՍՄ-ն հարկ է կազմակերպել առաջատար ձեռնարկություններից մեկի հենքի վրա, որը մասնագիտացվում է համապատասխան արտադրանքի թողարկման ուղղությամբ։ Այսպիսով, կստեղծվի բազմագործառական փակ ուղղահայաց արտադրա-սպառողական կառուցվածք, որը լրիվ վպահովի «արտադրություն-սպառում-տեխնիկական սպասարկում» փուլերը։ Դա հնարավորություն կտա չեզոքացնել նեղ վարչական անջրպետները, իսկ սոցիալական պլանի տեսակետից՝ վերացնել ինչպես ապրանքների, այնպես էլ դրանց սպասարկման բացառիկությունը և պակասը։

Հուշանվերների և գեղարվեստական իրերի արտադրության արտադրա-տնտեսական գործունեության կազմակերպման արդյունավետ ձև կլինի «Գեղարհեստներ» առևտրաարտադրական միավորման (ԱԱՄ) ստեղծումը։ Այն պետք է լինի տնտեսաշվարկային արտադրական միավորում (ձեռնարկություն)՝ հուշանվերների և նեղ տեսականու արտադրության գծով։ Այս միավորումը

պետք է իր կազմի մեջ ներգրավի նաև կապալով աշխատող ոչ մեծ արտադրական ձեռնարկությունները։ «Գեղարհեստներ» ԱԱՄ-ի հիմնական ֆունկցիաները պետք է լինեն այդ ձեռնարկությունների արտադրանքի մեծածախ և հատավաճառային իրացումը (պայմանագրային գներով), անհրաժեշտ արտադրական ռեսուրսներով (նույնպես պայմանագրային գներով) ապահովումը, ինչպես նաև շուկայի իրավիճակի և գնողունակ պահանջարկի ուսումնասիրությունը։

Վերը նշված միջոցառումները թույլ կտան էապես վերացնել հանրապետությունում ԺՍԱ դեֆիցիտը և բնակչությանն ապահովել որակյալ սպառողական ապրանքներով։

ВОПРОСЫ РАСШИРЕНИЯ ПРОИЗВОДСТВА ТОВАРОВ НАРОДНОГО ПОТРЕБЛЕНИЯ И ПОВЫШЕНИЯ ИХ КАЧЕСТВА

Р. А. АРУТЮНЯН, М. А. ТОНОЯН

Резюме

Одной из важнейших социальных проблем нашей республики является удовлетворение потребностей населения в товарах народного потребления (ТНП).

В условиях, когда Республика Армения готовится проводить самостоятельную экономическую политику на основе перехода к рыночной экономике, важное значение имеет радикальный пересмотр проводимой экономической стратегии. В противном случае, при наметившемся росте денежных доходов населения, не удастся сдержать рост инфляции, ведущей к обесценению доходов населения, следствием чего станет надвигающаяся социальная напряженность.

В целях стимулирования предприятий республики в увеличении производства дефицитных (в т. ч. дешевых) и качественных ТНП необходимо в отношении этих предприятий проводить более гибкую налоговую и кредитную политику, снижать ставки налогов, устанавливать жесткую зависимость между доходом предприятия-изготовителя и, в первую очередь, оплатой труда его производственного персонала от конечных работ предприятия.